

տիար, Թադիադին, Խադան, Մահմէտիք,
Նուրէդ-Գին ևայլն:

Չէր կարող չը պատահել, որ Պահլա-
ւունիներն էլ, դարու սովորութեան համա-
ձայն չը հետամտէին Արեւելի հրամանա-
կալ Ամիրապետից որոշ հրովարտակ ձեռք
բերել իրենց իշխանական տոհմի տխուր-
սով, որոնք միշտ ձգտել էին ինչպէս
Հայ-եկեղեցական, նոյնպէս պետական իշ-
խանութեան գաւազանները իրենց ձեռքե-
րի մէջ ունենալ: Եւ ի՞նչ աւելի կարող էր
հաճել լինել Պահլաւունիներին, բացի
իրենց մեծ Պապի՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի
տխուր վաւերացնել, վերանորոգել տալ
նոյնպէս Ամիրապետների հրովարտակով և
կրել իրենց Պահլաւ ազգանուն հետ, որը
բորձածէ ևն իրենց բոլոր շինածքների
արձանագրութիւնների մէջ:

Այս պարագան մեզ ստիպում է ենթա-
դրել, որ Ապուղամբը մի տխուր արձա-
նագրւած և շնորհւած վահրամ իշխա-
նաց-իշխանի պապին, կամ նրա հօրը ա-
մերապետական հրովարտակով: Այս Ա-
պուղամբ բառը թուում է Արու — Ղամբէր
բառի աղանատումն ու կրճատումը: Մ տա-
րից յետոյ Պ տառի արտասանութիւնը
այնքան խորթ է հայերիս մէջ, մանաւանդ
ի տարից առաջ և այն էլ էլի կրճատու-
մից յետոյ, որ ինքնըստինքեան հասկանա-
լի է, թէ ինչի է համարացել և չքացել Պ
տառը: Արաղամբի բառի աղաւաղածը
դարձել է Ապուղամբ, որը նշանակում է Ղամ-
բէրի սերունդ, կամ աւելի ճիշտը Լու-
սաւորչի — (ճրագի) յաջորդները — Լու-
սաւորչի զարմը:

Մտրտ

ԱՏԳՈՅՏ

Աշխատութիւնը՝ ոսկի կը ծնուցանէ. ողջմը-
տութիւնը՝ գայն կը պահէ:

Կը քնանայի և կ'երազէի թէ կհանք գեղեց-
կութիւն է. բայց արթնցայ և տեսայ թէ կեան-
քը ՊԱՐՏՈ ՎՍԱՐԵՆԷ է:

Հնազանդիլ սովելով՝ հրամայել կը սորվուի:
Այլոց երջանկութեան վրայ՝ բնաւ մի նա-
խանձիր (ձենել):

Գ Ր Ա Կ Ա Ն Ի

Վ. Ի Ր Գ Ի Լ Ի Ո Ս Ի « Ե Ն Է Ա Կ Ա Ն » Է Ն

ՊԱՏՄ. ՏՐՈՒՄԻՍ ԿՈՐԻՍԱՄԱՆ

(Ա մար տն բազմ. 1908, Արիւ, էջ 175)

«Ճիշդ այն պահուն՝ ուր կը սկսուի առջի քունն՝
Աստուածներուն հաճոյական քաղցր բնձան՝
Հէք մահացուաց ոսկորներուն մէջ սողալ,
Անա Հեկտոր քունիս մէջ ինձ երեցաւ
Տրտում տըխուր՝ արտօսարբուի աչքերով.
Այնպէս՝ ինչպէս տեսայ հրեմմի գանի
Ընդքար ճիւղի կառքէն՝ սեւցած, փոշիւց,
Արիւնթաթախ, և խրաքէն ծակ ոտքն ուռած:
Անը ինձի, ո՛հ, ինչ դարձեր էր անի,
Ո՛րքան փոխուեր էր երբեմնի Հեկտորէն,
Որ Աթիլի կողպատները հագած
Մեզի կու գար, կամ փոխական հրէ կըրակի
Աթալեացոց նաւատորմին կը նետէր.
Մօրուքն աղտոտ, հողոտ բոլոր, ու մագէրն
Իր գեղեցիկ իւրա կըպած արեւոով.
Եւ կը կըրէր դեռ իր վէրքերն անհամար
Ձորս հայրենի պարիսպներուն շուրջն առաւ:
Ինձ թըւեցաւ որ էն առաջ էս իրեն
Ուղեցի այս աթուր խօսքերը լալով.

«Ով Տրոյիոյ դու լոյս, ով յոյս անոստան
«Վարանացուց. այսքան ինչո՞ւ ուշացար.
«Որ կողմերէն կու գաս, Հեկտոր անձնալի:
«Մենք ոգեսպառ՝ քուկիներէդ շատերուն
«Կտոորածէն, և քաղաքին ու մարդոց
«Բիր կերպակերպ աղէտքներէն, ցաւէն վերջ՝
«Ըզբեղ, ո՛հ, ինչ վիճակի մէջ կը տեսնեմք:
«Ինչ դէպք դըմնէ՞ կ'աղհատէ դէմքը պայծառ,
«Եւ ինչ էն այդ վէրքերն որ վրադ էր տեսնեմ»:
«Ինքն ինձի չի՞ պատասխաներ, և ոչ ալ
Իմ սքննոտի հարցումներուս փայժ կ'ընէ,
Այլ հանելով իր կուրծքէն խոր հուռաչներ,
«Փախի՛ր կ'ըսէ, աստուածորդիդ, ո՛հ, փախի՛ր,
«Եւ ինքզինքդ ապտէ այս բոցերէն.
«Անա գրաւեր է թըշնամին պարիսպներն,
«Անա Տրոյան իր բարձրաբերձ կառարէն
«Հիմնայատակ կը կործանի. կը բաւէ
«Ինչ որ մինչեւ ցարդ գործուեցաւ Պրիամոս
«Եւ հայրենեաց համար. եթէ կարենար
«Մահացու ձեռքը պաշտպանել Պերգաման,
«Կը պաշտպանուեր ան դեռ այս իմ բազուկով:
«Սըրբութիւններն ու թերափները Տրոյան
«Փեղ կը յանձնէ. ա՛ն դուն գանոցք իբր ընկեր
«Ճակատագրիդ, անոնց պարիսպ փընտռէ դուն,